Г. С. СВАЗЯН. История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Е., Институт истории НАН РА, 2009, 350 с.



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը «Մեսրոպ արք. Աշճյան99999 մատենաշարով 2009 թ. լույս է ընծայել Հենրիկ Սվազյանի «Աղվանից աշխարհի պատմությունը (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ)» աշխատությունը (ռուսերեն): Դրանում հայագիտության մեջ առաջին անգամ գիտական անաչառ դիրքերից ներկայացված են Մեծ Հայքի այդ հարևան երկրի քաղաքական, տնտեսական ու սոցիալական պատմության հանգուցային խնդիրները:

Հեղինակն օգտագործել է բազմաթիվ սկզբնաղբյուրներ՝ հայ և օտար հեղինակների աշխատություններ՝ ցուցաբերելով գիտական օրինակելի բարեխղճություն: Նա արդարախույզ քննությամբ մերժում է ադրբեջանցի պատմության կեղծարարների հակագիտական ձեռնածությունները և նրանց միտումը՝ պատմությունը հարմարեցնել իրենց նեղ ազգայնական նպատակներին և պատմական Աղվանքի սահմանները համապատասխանեցնել այժմյան «Ադրբեջանական» կոչված հանրապետության սահմաններին՝ աղվանացիներին համարելով իրենց նախնիները: Սույն մենագրությունը լուրջ հակահարված է այդ կարգի մտահնարքներին:

Հ. Սվազյանի աշխատությունը բաղկացած է առաջաբանից, տասնմեկ գլխից, վերջաբանից և մատենագիտական ու հատուկ անունների ցանկից:

Առաջին գլխում քննության են առնված հեղինակին մատչելի հայ և օտար սկզբնաղբյուրները, վիմարձանագրությունները, հնագիտական նյութերը, ինչպես նաև պատմագիտական գրականությունը: Ի մի բերելով դրանցում առկա անհերքելի փաստերը՝ Հ. Սվազյանը իրավամբ հանգում է ճիշտ հետևության, նշելով, որ աղվանական այդպես էլ մեկ ընդհանրության չհասած ցեղերը, ձուլվելով պարսկական, արաբական ու զանազան այլ ցեղերի հետ, դուրս եկան պատմության ասպարեզից, իսկ ադրբեջանական ժողովրդի նախնիներ համարվող օղուզ-թյուրքերի ներխուժումների հետևանքով առաջացան բոլորովին նոր էթնիկ թուրքալեզու կազմավորումներ, որոնց միավորում էր միասնական կրոնը (իսլամ), լեզուն ու մշակույթը: Նրանք ոչ մի ընդհանրություն չունեին Աղվանքի բնակչության հետ: Անդրադառնալով հունա-հռոմեական հեղինակների գործերում հանդիպող «Ալբանիա» անվանաձևին՝ Հ. Սվազյանն իրավամբ կարծում է, որ այն ծագել է հայերեն «Աղուանք» ձևից՝ ղ-լ և ու (վ)-բ հնչյունափոխությունների հետևանքով:

Անշուշտ, աշխատության մեջ գիտական և այժմեական կարևորություն ունի այնպիսի առանցքային խնդրի շոշափումը, ինչպիսին Աղվանքի քաղաքական սահմանների հարցն է: Հեղինակը անդրադառնում է դրանց և աղբյուրների ընձեռած տեղեկությունների մանրախույզ քննությամբ ի դերև է հանում սահմանների վերաբերյալ ադրբեջանցի հեղինակների շինծու պատկերացումները: Նա գիտական փաստարկմամբ ժխտում է

ադրբեջանցի պատմաբանների հակագիտական մեկնակերպն այն մասին, որ իբր Արցախի և Ուտիքի բնակիչները ոչ թե հայեր էին, այլ գարգարներ, ուտիներ, թուրքալեզու ցեղեր՝ խազարներ, բասիլներ, նաև ծավդեացիներ, որոնք, լինելով աղվանական ցեղեր, X դարից հետո հայացվել են: Հեղինակը բանիբուն քննությամբ ներկայացնում է Ուտիք-Արցախյան հայաշ-խարհի իրական պատմությունը, նրա էթնոցեղային կազմը, բնակչության զբաղմունքը, հավատալիքները: Ըստ Հ. Սվազյանի՝ «ալբանացիներ» բառեզրը էթնիկական անվանում չէ, այլ ունի հավաքական իմաստ և բնորոշել է «Ալբանիա» երկրի տեղաբնիկ, կովկասյան ծագումով բոլոր ցեղերին: Եվ որպես վերջնական եզրահանգում՝ նա նշում է բուն Աղվանքի սահմանները բոլոր ուղղություններով: Դրանք կազմում էին հյուսիսում Կովկասյան լեռնաշղթայի հարավային Կերաունյան ճյուղը, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում և հարավում՝ համապատասխանաբար Ալազան և Կոտ գետերը: Այդպիսով, Աղվանքը չէր ընդգրկում այժմյան Ադրբեջանի Հանրապետության ամբողջ աջափնյակը՝ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներով հանդերձ, որոնք վաղագույն ժամանակներից ընդգրկված էին Երվանդունիների, ապա նաև հայկական մյուս թագավորությունների կազմում, և նրանց բնակչությունն ի սկզբանե խոսել է հայերենի «արցախային» կոչված բարբառով:

Աղվանական ժողովրդի կազմավորումը, ի տարբերություն հայերի ու վրացիների, մնացել է անավարտ: Հեղինակն արդարացիորեն նշում է, որ XV-XVII դդ. արդի ադրբեջանական ժողովրդի ձևավորմանը մասնակցել են ոչ թե աղվանացիները, որոնք վաղուց արդեն վերացել էին պատմաբեմից, այլ օղուզ-թյուրքերը՝ այժմյան ադրբեջանական ժողովրդի նախնիները:

Աշխատության մեջ արծարծվում է նաև Աղվանքում եղած ցեղային միությունների պատմությունը: Հեղինակը համաձայն է գիտական գրականության մեջ արմատավորված այն կարծիքին, ըստ որի՝ մինչև մ.թ.ա. 330-ական թթ. վերջերը հայ և օտար սկզբնաղբյուրներում «աղվանացիներ» անվան չհիշատակվելը հետևանք էր այն իրողության, որ մերձկասպյան ցեղերը հանդես են եկել «կասպեր» («կասպ», «կազբք») հավաքական անունով՝ ընդգրկվելով Աքեմենյան Իրանի 11-րդ սատրապության կազմում: Աքեմենյան պետության բարձումից հետո աղվանական ցեղերը թևակոխում են անկախության շրջափուլը, իսկ մ.թ.ա. I դ. սկզբներին ստեղծվում է Աղվանական պետությունը, որը գոյատևում է մինչև 461 թ.: Այնուհետև Աղվանքը վերածվում է պարսկական մարզպանության:Հ. Սվազյանը նշում է, որ Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակ Սասանյան Իրանը, ելնելով իր նվաճողական քաղաքականությունից, հայկական Արցախ և Ուտիք նահանգները բռնակցում է բուն Աղվան-քին և ստեղծում մեկ վարչական միավոր՝ Աղվանք անվամբ: «Աղվանից» անունը կրող մարզպանության բաղկացուցիչ մասերի՝ Արցախի և Ուտիքի վրա ևս տարածվում է մարզպանության համար ընդհանուր այդ անունը, որը, սակայն, հայկական նահանգների համար սոսկ աշխարհագրական անվանում էր՝ առանց բուն Աղվանքի հետ որևէ օրգանական կապի:

Աղբյուրների հավաստի հենքի վրա հեցած այս տեսակետը լիովին տարբերվում է ադրբեջանցի հեղինակների ոչնչով չհիմնավորված թյուր մեկնությունից, ըստ որի՝ Աղվանական պետությունը իբր կազմավորվել է մ.թ.ա. III դարում: Հ. Սվազյանը հիմնավորապես ժխտում է այդ հեռավոր ժամանակներում (մ.թ.ա. I – մ.թ. I դդ.) Աղվանքում թյուրքական տարրեր, անգամ թագավոր տեսնելու ադրբեջանցի հեղինակների անհեթեթ փոր-ձերը:

Աշխատությունում հետազոտվում է Աղվանքի քաղաքական պատմությունը մ.թ.ա. I – մ.թ. III դարերում: Նշվում է, որ մ.թ.ա. I դ. Աղվանքը ենթակա էր Մեծ Հայքի թագավորությանը և հայ-հռոմեական պատերազմի ժամանակ դաշնակցում էր Տիգրան Մեծին: Վեր է հանվում նաև Աղվանքի պատմությունն առաջին Սասանյանների օրոք: Հաջորդաբար քննարկվում են Աղվանքում ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը և Արշակունիների հարստության հաստատմանն առնչվող իրողությունները: Հեղինակի համոզմամբ՝ զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող և միմյանցից մեկուսացած ցեղերի առկայության պայմաններում Աղվանքում գոյություն ունեին տնտեսական տարբեր կացութաձևեր: Գերիշխողն ավատատիրական հարաբերություններն էին՝ դասային աստիճանակարգմամբ, հողատիրության «հայրենիք» և «պարգևականք» ձևերով: Նոր տնտեսական հարաբերությունները հանգեցվում են դինաստիական փոփոխությունների: Աղվանքում հաստատվում է Արշակունյաց հարստությունը (IV դ. 30-ական թթ.): Հ. Սվազյանը մանրախույզ քննությամբ ցույց է տալիս, որ այն սերվել էր հայ Արշակունիներից՝ ի մասնավորի Տրդատ Մեծի ազգակից Սանատրուկից: Նման կարծիքը լիովին տարբերվում է տարածված այն սխալ տեսակետից, թե իբր նոր հարստությունը Մասքթաց Արշակունիների մի ճյուղն էր Աղվանքում:

Գրախոսվող մենագրության մեջ առանձնապես կարևորվում են հայ-աղվանական հարաբերություններին առնչվող հարցերը: Ցույց է տրվում, որ քրիստոնեությունն Աղվանից աշխարհ է թափանցել Հայաստանից: Աղվանքի Ուռնայր թագավորն իր մկրտությունն ստացել է հայոց թագավոր Տրդատ Գ-ի և Գրիգոր Լուսավորիչ կաթողիկոսի ձեռքով և, վերադառնալով հայրենիք, IV դ. 70-ական թվականներին քրիստոնեությունը հռչակել է պետական կրոն:

Կարևոր է, անշուշտ, աղվաներեն այբուբենի ստեղծման խնդիրը: Ոչ մի լուրջ ուսումնասիրող չի կասկածում, որ դրա ստեղծողը ևս Մաշտոցն էր: Մինչդեռ ադրբեջանցի հեղինակները նրան վերապահում են սոսկ այն վերափոխողի դեր: Ի հեճուկս նրանց՝ Հ. Սվազյանը մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, որ աղվանական այբուբենի հեղինակը Մաշտոցն է, որը դարակազմիկ այդ միջոցառումն իրականացրել է Բենիամին երեցի, Աղվանից թագավոր Արսվաղենի և տեղի եպիսկոպոս Երեմիայի աջակցությամբ:

Աշխատությունում արծարծվում են նաև 450-451 թթ. ազատագրական պատերազմի ժամանակ հայ-աղվանական դաշինքին առնչվող եղելությունները: Հանգամանորեն քննարկելով Աղվանքի վերջին թագավոր Վաչե Բ-ի գործունեությունը՝ հատկապես 457-461 թթ. Սասանյանների դեմ նրա մղած պայքարի դրվագները, Հ. Սվազյանը իրավամբ եզրահանգում է, որ հենց այդ թագավորի օրոք (461 թ.) Աղվանքը վերածվեց պարսկական մարզպանության, և միայն այդ ժամանակ են Արցախը և Ուտիքը միացվում Աղվանքին: Հեղինակն արդարացիորեն մերժում է ադրբեջանցի հեղինակների հիմնազուրկ կարծիքը, որի համաձայն՝ հայկական այդ նահանգները «հնուց ի վեր լինելով աղվանական մարզեր, տվյալ ակտով վերամիավորվում են Աղվանքի հետ»:

Հ. Սվազյանը համոզմունք է հայտնում, որ 484 թ. Նվարսակում կնքված հայ-պարսկական պայմանագրի շնորհիվ Աղվանից մարզպանության գլուխ է կանգնում Վաչագան Գ Բարեպաշտը, որը վերջին Արշակունին էր: Նրա գործունեությունը հիմնականում ընթացել է Հայոց Արևելից Կողմանքում՝ Արցախում և Ուտիքում: Վաչագան Գ Բարեպաշտի կրոնա-

կան, եկեղեցաշինական ու կրթալուսավորական հարուստ և բազմաբնույթ գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ունի 488 թ. Ուտիքի Աղվեն ավանում գումարած եկեղեցաժողովը, որի կանոնական որոշումները ամրակայեցին երկրի ներքին կարգերը, եկեղեցու նվիրապետական համակարգը: Հ. Սվազյանը, արժանի գնահատական տալով, մերժում է Ֆ. Մամեդովայի և մյուսների սնամեջ ենթադրությունը, ըստ որի՝ Աղվենից ժողովի սահմանած կանոնները նախապես գրվել են աղվաներեն (գարգարացիների լեզվով) և միայն հետագայում են թարգմանվել հայերեն: Հարկ է նշել, որ նրանք այդ կարգի կեղծիքների են դիմում նաև հայ մատենագիրների՝ Մովսես Կաղանկատվացու, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Գոշի, Դավիթ Ալավկաորդու և առհասարակ Հայոց Արևելից Կողմանքում ծնված հայ հեղինակների ստեղծագործությունների մասին խոսելիս՝ նրանց վերագրելով աղվանական ծագում: Խստորեն քննադատելով նրանց անհեթեթ մեկնաբանությունները և բացահայտելով պատմական ճշմարտության դեմ մեղանչող այդ պատմաբանների որդեգրած արատավոր մեթոդը՝ Հ. Սվազյանը գիտականորեն ապացուցում է, որ վերոհիշյալ մատենագիրները հայեր էին, իսկ նրանց երկերը շարադրվել են ժամանակի գրական հայերենով՝ գրաբարով, և մեզ են հասել նախնական տեսքով:

Հեղինակի դիտարկումների համաձայն, երբ VI դարում խազարական ցեղերն ասպատակում են Աղվանքը, սպառնալով նաև Իրանին, Սասանյանները պաշտպանական նկատառումներով ամրացնում են Պարտավը և մյուս քաղաքները, կառուցում Դերբենդի պարիսպները և սահմանային այդ տարածքներում բնակեցնում տարբեր մարզերից գաղթեցված ցեղերի, որոնք պետք է երկիրը պաշտպանեին խազարների ու հյուսիսային այլ քոչվոր ցեղերի հարձակումներից: Դա հանգեցնում է երկրամասի տրոհմանն առանձին վարչամիավորների՝ իրենց նոր աշխարհագրական անվանումներով, ինչն ավելի է խորացնում առանձին ազգագավառների մեկուսացումը հարևաններից: Աղվանքի ազգային կազմի անմիատարրության հետևանքով այլևս գործածությունից դուրս է մղվում «Աղուանք» երկրանունը, քանի որ նոր ցեղերն ու ժողովուրդներն իրենց են ձուլում տեղացի տարանջատ բնիկներին՝ աղվանացիներին, որոնք VIII դ. արդեն վերանում են պատմաբեմից: Մինչդեռ Աղվանից մարզպանության մեջ ներառված հայկական Արցախ և Ուտիք նահանգները պահպանում են իրենց ազգային դիմագիծը՝ ստեղծելով Առանշահիկների ինքնուրույն իշխանությունը: Այնուհետև «Աղուանք» աշխարհագրական անունը գործածվում է միայն այդ նահանգների առնչությամբ:

Աշխատության վերջին երկու գլուխներում քննության են առնվում Արցախի և Ուտիքի VII-VIII դդ. պատմության դրվագները, ի մասնավորի այդ նահանգներում ոչ հայկական՝ Միհրանյան տոհմի հաստատման և նրա կողմից հայազարմ Առանշահիկ տոհմը քաղաքական ասպարեզից դուրս վանելու հանգամանքները, ինչպես նաև Միհրանյանների հայացմանն առնչվող իրողությունները: Հ. Սվազյանը համոզիչ դիտարկումներով ցույց է տալիս, որ Միհրանյանների տիրապետությունը Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում սոսկ «իշխանություն» էր, և իրենք ընդամենը իշխաններ էին: Ուստի նշված տարածքում հանդես գալով իբրև կառավարիչներ՝ նրանք չէին կարող դառնալ Աղվանք-Ալբանիայի թագավորների հաջորդները, առավել ևս պահպանել այդ թագավորության անընդմեջությունը, որպիսին կամենում են տեսնել հարևան երկրի պատմաշինարարները:

Հաստատվելով Ուտիք-Արցախում և ընդունելով քրիստոնեություն՝ Միհրանյանները հայ բնակչության մեջ և հայ մշակույթի ազդեցությամբ

հայանում և այնուհետև հանդես են գալիս որպես այն ամենի ջատագով, ինչը հայկական էր: Միհրանի սերունդները (որոնց մեջ քիչ չէին նշանավոր իշխանները՝ Վարազ-Գրիգոր, Ջուանշիր, Վարազ-Տրդատ և ուրիշներ), լինելով հեռատես քաղաքական գործիչներ, զանազան միջոցներով՝ զինված պայքարով, դիվանագիտությամբ, խնամիական կապերով, կարողացան պահպանել իրենց իշխանությունը Բյուզանդիայի, Արաբական խալիֆայության, խազարների և հյուսիսային ուրիշ ցեղերի հարձակումների պայմաններում: Երկդարյա տիրապետությունից հետո Միհրանյաններն իրենց տեղը զիջեցին երկրամասի բնիկ տերերին՝ Առանշահիկներին:

Մենագրության մեջ կան նաև վերապահելի դիտարկումներ: Օրինակ՝ վիճարկելի է III դ. Աղվանքում ստրկատիրական հասարակարգի առկայության վերաբերյալ հեղինակի տեսակետը կամ Միհրանյաններին Սասանյանների ազգակից համարելը, ինչպես նաև 336 թ. մասքութների արշավանքի ժամանակ Արշակունիների հայոց թագավորությանը տիրանալու՝ նրանց թագավորի՝ Սանեսանի մտահղացման վերաբերյալ կարծիքը: Սակայն դրանք բնավ չեն ստվերարկում Հ. Սվազյանի մենագրությունը, որն արժեքավոր ներդրում է աղվանագիտության բնագավառում: Այն էականորեն նպաստում է Աղվանքի պատմության ուսումնասիրմանը և ունի նաև արդիական հույժ կարևոր հնչեղություն, քանի որ ըստ արժանվույն հակահարված է հասցնում ադրբեջանական չդադարող քարոզչությանը: Վերջինիս հետապնդած խնդիրներից մեկն էլ Արցախի և Ուտիքի ժողովրդի դիմադրական կորովի թուլացումն է և նրանց մղած արդարացի պայքարի ազատագրական բնույթի նենգափոխումը: Աղվանքի և Ուտիքի պատմության գիտականորեն ճշմարտախույզ քննությամբ հեղինակը հաստատում է այդ նահանգների հայկական լինելը և գիտական, հասարակական ու քաղաքական գործիչների, նաև լայն հասարակայնության առջև բացահայտում պատմական իրականությունը, որի հանդեպ անզոր են ամեն գույնի կեղծարարները:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ.
Պատմական գիտությունների դոկտոր